ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ 1946, № 11—12 *Общественные науки*

Հ. Թումանյան

ՍՈՎԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Արյան մեջ խեղդելով մայիսյան ապստամբությունը, դաշնակներն ավելի ուժեղացրին իրենց տեռորիստական ռեժիմը։ Կոմունիստական կազմակերպությունները անցան խորը ընդհատակ։ Ընդհատակում ոչ միայն չթուլացավ կոմունիստական պրոպագանդան հանուն սովետական իշխանության, այլև այն ընդունեց նոր և ավելի խորը բովանդակություն։ Աճեցին ընդհատակում գործող կոմունիստական կազմակերպությունները։

Դաշնակների վարած ներքին քաղաքականությունը մայիսից մինչև նոյեմբեր ընկած ժամանակաշրջանը ոչ միայն հայտնի է կոմունիստներին բացահայտ հալածելով, նրանց դեմ տեռոր կազմակերպելով, այլև նրանով, որ այդ քաղաքականությունը խորացրեց երկրի էկոնոմիկայի հետագա փլուզումը։ Այդ քաղաքականությունը հայտնի դարձավ բանվորների կյանքի պայմանների հետագա վատթարացմամբ, գյուղացիական զանգվածներին մասսայաբար թալանելով, ազգային փոքրամասնությունների բնաջնջմամբ։

Դաշնակների արտաքին քաղաքականությունը բնութագրվեց հետագա նոր ավանտյուրաներով, որոնց հետևանքը եղավ հայ ժողովրդի մի զգալի մասի ոչնչացումը, մի շարք շրջանների տնտեսության լիակատար ավերումը։

Դաշնակների վիճակագրությունը բանվորների վիճակի մասին քիչ նյութ է տալիս։ Առանձին փաստաթղթերից, զանազան պաշտոնական գրագրություններից փոքր ի շատե գաղափար ենք կազմում բանվորների հանդեպ դաշնակների վարած դաժան քաղաքականության մասին։ Բնորոշ են աշխատավարձի անկայուն վիճակը, սոցիալական ապահովության բացակայությունը, աշխատանքի պայմանների վատթարացումը։ Դաշնակների աշխատանքի և խնամատարության մինիստրությունների գործերում եղած զեկուցումներից և այլ գրագրություններից պարզվում է, որ 1920 թվականի կեսին բանվոր-ծառայողների ամսական միջին աշխատավարձը դաշնակների չեկերով կազմել է 400 ռուբլի։ Այդ գումարը, որ 1919 թվականի կուրսով հավասար էր նախապատերազմյան չորս ռուբլու, դաշնակների տիրապետության վերջին շրջանում չէր անցնում երկու կոպեկից։ Նույն խնամատարության մինիստրության գործերում տվյալներ կան կառավարական պահեստներում եղած վաճառքի ենթակա մթերքների սակագների մասին։ Ըստ այդ տվյալների՝ կառավարությունն ունեցել է շատ սակավ քանակությամբ՝ գարու ալյուր, եգիպտացորեն, բրինձ, շաքարավազ, աղ, աղած ձուկ, բոված գարի։ Վերոհիշյալ մթերքների համար սահմանվել են վաճառքի հետևյալ գները։

Մթերքներ	Չափի միավոր	Գինը 1920 թ. հունվարին (ռուբ.)	Գինը 1920 թ. փետրվարին (ռուբ.)
Գարու ալյուր	փութ	250	600
Եգիպտացորեն	»	250	500
Բրինձ	»	650	1050
Շաքարավազ	»	1600	2400
Աղ	»	70	70
Աղած ձուկ	»	300	500
Բոված գարի	»	700	1000

Այս տախտակը, որ մենք կազմեցինք խնամատարության մինիստրության տվյալների հիման վրա,[1] ցույց է տալիս, նախ՝ կառավարության տրամադրության տակ եղած մթերքների ասորտիմենտը։ Բնորոշ է, որ աշխատավորության կենսամթերքների շարքն էին դասել բոված գարին։ Այս տախտակում բերված գները, որ վերաբերում են 1920 թվականի հունվար փետրվար ամիսներին, պետք է ասել, որ բնորոշ չեն նույն թվականի երկրորդ կեսի համար, երբ նկատի ունենանք, որ մայիսից նոյեմբեր ընկած ժամանակաշրջանում տեղի է ունենում դաշնակցական չեկերի կուրսի հետագա արժեզրկումը, ուստի հարաբերականորեն բարձրանում են նաև գները։

Եթե նույնիսկ վերևում բերված գներով հաշվելու լինենք բանվոր-ծառայողների աշխատավարձի ռեալ արժեքը, ապա կստացվի, որ բանվոր-ծառայողների աշխատավարձը կարող էր ապահովել նրանց համար ապրուստի օրական հետևյալ մինիմումը. կես ֆունտ գարու ալյուր, կամ նույնքան եգիպտացորեն, կամ թե 0.4 ֆունտ բոված գարի։ Այդ նրանք կարող էին ձեռք բերել, եթե, իհարկե, ստանային սահմանված աշխատավարձի լրիվ չափը և կանոնավոր։ Չպետք է մոռանալ, սակայն, որ բանվոր-ծառայողների սահմանված աշխատավարձը նախ չէր տրվում լրիվ, շատ հաճախ զանազան պատրվակներով այն կրճատվում էր, ապա տրվում էր խիստ անկանոն։ Իսկ երբ կանոն, աշխատավարձը տրվում էր հատկապես այն ժամանակ, երբ կառավարական պահեստներում մթերքներ չկային կամ, ավելի ճիշտ կլինի ասել, երբ թալանվել էին դաշնակ խմբապետների կողմից։ Կապիտալիստական նորմալ հարաբերությունների պայմաններում աշխատավարձը բանվորական ուժի վերարտադրության անհրաժեշտ պայմանն է և երբ նա իր մակարդակով չի ապահովում բանվորական ուժի վերարտադրությունը, այն դեպքում խոսք չի կարող լինել երկրում արտադրական կյանքի մասին։ Դաշնակները չհոգալով բանվորների կյանքի վերարտադրության մինիմալ պայմանների մասին, աշխատավարձի և գների իրենց քաղաքականությամբ ոչ միայն քաղց ու մահ էին սպառնում բանվորներին, այլև զրկում էին երկիրն արտադրական կյանքից։ Դաշնակներն, իհարկե, վերջինս վերագրում էին այլ պատճառների, որ երևում է նրանց պաշտոնական գրագրությունից։ Աշխատանքի մինիստրության աշխատանքի և վիճակագրության բաժնի վարիչ ոմն Ս. Գրիգորյան աշխատանքի պարոն մինիստրին գրում էր. «Աշխատանքի մինիստրության աշխատանքի պաշտո-

[1] Տես Պետ. արխիվ ֆոնդ 71 գործ 272.

պանության բաժինն առաջին անգամ կազմակերպվելով Հ. Հանրապետության մեջ, գտնվում է շատ աննորմալ պայմաններում, քաղաքական, թե տնտեսական տեսակետից։ Երկարամյա պատերազմները, գաղթականությունը և սովը քայքայել ու ոչնչացրել են երկրի արդյունաբերությունը. անորոշ ու անապահով կյանքը թույլ չի տալիս ժողովրդին ստեղծագործել, արդյունաբերող աշխատանքի դիմել...Մի կողմ թողնելով դեռ պետական ապահովագրությունը բանվորների վերաբերյալ, նույնիսկ դժվար է որոշել բանվորի ընդհանուր պետության համար վարձատրությունը (ուզում է ասել պետության կողմից բանվորին տրվող վարձատրությունը։ Հ. Թ.)։ քանի որ օր օրի վրա ընկնում է ու թանգանում երկրի վրա տնտեսական կյանքը»[1]։

Բանվոր-ծառայողների քաղցած վիճակը, նրանց համար առողջապահական մինիմալ պայմանների լիակատար բացակայությունը հասցրել էր այն բանին, որ նրանց կազմի 80 տոկոսից ավելին հիվանդ էր։ Այս էր դաշնակների քաղաքականությունը բանվորների նկատմամբ։

Որպես հակաժողովրդական կառավարություն, դաշնակներն իրենց ագրարային քաղաքականությամբ ոչ մի քայլ առաջ չգնացին ցարիզմի ագրարային քաղաքականությունից։ Սկզբից ևեթ որոշում ընդունեցին վերականգնել կալվածատերերի իրավունքը. «Քանի դեռ չի մտցված կյանքի մեջ հողերի համայնացման օրենքը», ընդունել կալվածատերերի իրավունքն իրենց հողերի վերաբերմամբ և համաձայնության գալով տերերի և կապալառուների հետ, վերականգնել կալվածատերերի իրավունքը»[2]։

Սկզբունքորեն անզոր գտնվելով լուծելու հողային հարցը, դրա փոխարեն դաշնակները, ազգային փոքրամասնություններին բնավեր անելով, նրանց հողերը հանձնեցին գյուղի կուլակներին, խմբապետներին, հենց իրենց՝ պառլամենտի անդամներին։

Թալանելով ադրբեջանական և թուրք բնակչությանը, գրավելով նրանց մանր ու խոշոր եղջերավոր անասունները, դաշնակները հայ աշխատավոր գյուղացու համար կոռային պարտավորություններ սահմանեցին։ Դաշնակ բաշիբոզուկները բռունցքի ուժով, գնդակի սպառնալիքով հայ շինականին ստիպում էին անվարձ "պատրակություն" անել, խնամել թալանից բերած անասուններին։ Ելում էին գյուղացիների խոտը, արածացնում էին ցանքերը, ուժով ստիպում էին, որ գյուղացիները աշխատանքի եռուն շրջանում իրենց քարշող անասուններով և գործիքներով իրենց սեփական կալում կալսեին հարևան գյուղացու դաշտից թալանած հացը։

Դաշնակների այս վայրագությունները առանձնակի ուժով արտահայտվեցին մասնավորապես 1920 թ. ամառը և աշնանը։ Գյուղացիների նկատմամբ կիրառած կամայականությունն ու ճնշումը այն տեղը հասցրին, որ գյուղացու մեջ մեռավ ամեն մի ձգտում դեպի տնտեսությունը և նրա բարելավումը։ Այդ ամենը հասցրին նրան, որ ոչ միայն գյուղատնտեսությունն ընկավ չտեսնված չափերով, այլև երկիրն ապրեց պարենային ծանր ճգնաժամ, որի հետևանքով ոչ միայն սովի մատնվեց քաղաքային բնակչությունը, այլև սովից մահացան տասնյակ հազարավոր գյուղացիներ։

Սովի և ավերածության ծանր պայմանները Հայաստանը դարձրին

[1] Պետական արխիվ, ֆոնդ 31, գործ 395։

[2] Տես մինիստրների խորհրդի ապրիլի 2 ի նիստի արձանագրության «Զ» կետը։

նաժամատարած աղքատության ու որբերի երկիր։ Ավելի քան 50.000 մանուկներ ու պատանիներ անապաստան վիճակում էին գտնվում։ Դրանցից միայն քչերին էր վիճակվել ամերիկյան որբանոցներում ապաստան գտնել։ Ըստ պաշտոնական տեղեկությունների՝ 1920 թվականի օգոստոս ամսին որբանոցներում ապաստան գտած որբերի թիվը կազմում էր 17.000 հոգի։ Սրանք «բախտավոր» անապաստաններն էին, որոնց թերևս մահը չէր սպառնում իր ամբողջ ուժով։ Բայց միայն այդքան։ Թե ինչպես էին ապրում որբերը, այդ մասին ամբողջական պատկեր տվող տեղեկություններ չունենք։ Դրա փոխարեն տեղեկություններ կան նրանց համար սահմանված սննդի նորմաների մասին։ Խնամատարության մինիստրության գործերում եղած տվյալներից՝ երևում է, որ որբերի համար սահմանված են եղել ամսական սննդի հետևյալ նորմաները. ձավարեղեն՝ չորս ֆունտ, լոբի նույնքան, շաքարավազ՝ մեկ ֆունտ, խտացրած կաթ՝ մեկ ֆունտ, կակաո՝ 0.5 ֆունտ[1] Այդ տվյալներից ելնելով՝ մենք հաշվեցինք օրական նորմաները գրամներով և ստացվեց այսպիսի պատկեր.

Մթերքներ	Չափի միավոր	Ամսական նորման	Վերածված գրամների	Օրական նորման գրամներով	Ծանոթ.
Ձավարեղեն	ֆունտ	1	1500	53	Հացի նորմաների մասին տվյալներ չկան
Լոբի	»	4	1500	53	
Շաքարավազ	»	1	400	13	
Խտացրած կաթ	»	1	400	13	
Կակաո	»	0,5	200	7	
Ընդամենը՝		10.5	4200	139	

Աղյուսակից երևում է, որ երեխաների օրական նորման չէր անցնում 140 գրամից։ Դժվար է ընդունել, որ սահմանված նորմաները լրիվ չափով տրվել են որբերին, եթե նկատի ունենանք, որ զանազան փոքր ու մեծ պաշտոնյաներ նախապես իրենց բաժինն էին հանում այդ նորմաներից։ Բերված տվյալները բավական են հասկանալու համար այն դաժան իրողությունը, երբ որբերի նշանակալից մասը կոտորվում էին մասսայական այդ հիվանդությունների տարածված լինելու հետևանքով։

Նկատի ունենալով Հայաստանում տիրող դրությունը, Ադրբեջանի կոմպարտիայի օրգան «Կոմունիստ»-ը իր էջերում գրում էր. «Թերևս աշխարհի մի անկյունում այնպիսի արագությամբ չի աճում թշվառների, խեղճերի, շահագործվողների քանակը, որպիսի արագությամբ կատարվում է այդ Հայաստանի գյուղերում։ Իրականությունը ներկայացնում է մի սոսկալի պատկեր — աղքատների ու անգործների, հալածյալների ու շահագործվողների թիվը աճում է օրերով ու ժամերով. մյուս կողմից էլ գյուղատնտեսությունը կենտրոնանում է բնակչության մի քանի տոկոս կազմող կուլակների ձեռքում, որոնց հովանավորում է դաշնակցական կառավարությունը հանուն ազգային կապիտալի ուժեղացման»[2] Ահա թե ինչու հազար անգամ իրավացի էր ընկեր Միկոյանը, երբ Հայաստանը դաշնակցականների տիրապետության շրջանում բնորոշում էր որպես որբերի երկիր, արցունքի երկիր։

[1] Պետական արխիվ. ֆոնդ 71, գործ 250։

[2] «Կոմունիստ» օրգան Ադրբեջանի և Բաքվի կոմպարտիայի, № 1. ապրիլ. 1920 թ.

Դաշնակների վարած ներքին քաղաքականությունը ճգնաժամի առաջ էր կանգնեցրել նրան և սպառնում էր նրա պետական սիստեմի գոյությանը։ Երկրի էկոնոմիկայի քայքայումը, աշխատավորական մասսաների նկատմամբ կիրառվող ճնշումն ու հալածանքները, սովը, համաճարակը,— այդ ամենը աշխատավորությանը մղում էր դեպի անհեռանձելի պայքար ընդդեմ դաշնակների տիրապետության։ Սկսած հունիս ամսից՝ Հայաստանի շատ շրջաններում տեղի են ունենում գյուղացիական ընդվզումներ։ Գյուղացիական շարժումները քանիցս կրկնվում են Ղազախում, Շամշադինում, ավելի ուշ՝ նաև Զանգեզուրում։

Կոմունիստական կազմակերպություններն ընդհատակից ղեկավարում էին ներքևից առաջացող շարժումները, ձգտելով ծավալել ու խորացնել շարժումը։ Դաշնակների ավազակային բանդաները անգոր դառնվելով կասեցնել շարժումը, աշխատավորության ուշադրությունը ցրելու, ինչպես նաև իրենց խելահեղ, ըստ էության, ավազի վրա կառուցված պլաններն իրականացնելու նպատակով՝ կռվի բռնվեցին Թյուրքիայի հետ։

Հունիս—հուլիս ամիսներին ունեցած ժամանակավոր հաջողությունները օգոստոսից սկսած փոխարինվեցին խայտառակ պարտություններով, որոնք էժան չնստեցին առանց այն էլ հյուծված ու քայքայված հայ ժողովրդի մի զգալի հատվածի վրա։

Սեպտեմբերի վերջերից սկսվեց Թյուրքերի արշավանքը, որը ժամանակավոր դադարից հետո ընդունեց լայն ծավալ։ Նոյեմբերի 7-ին Թյուրքական զորքերը լայն ճակատով անցան Ախուրյան գետը և ներխուժեցին Ալեքսանդրոպոլ քաղաքը և գավառը։ Աշխատավորության գլխին կանգնեց ֆիզիկական բնաջնջումն սպառնալիքը։ Արշավող զորքերի հրամանատարությունը դրված էր հայատյաց Ֆեզիմ-Կարա-Իեքիր փաշայի վրա, որը նպատակ էր դրել բնաջնջել հայերին։

Թյուրքական զորքերը հաղթական երթով ներխուժելով Հայաստան, հրի ու սրի մատնեցին անդեն խաղաղ բնակչությանը։ Դաշնակների բանակներն ու խմբերը լքեցին ճակատները։ Թյուրքական փաշաները կախաղանի սյուներ բարձրացրին Ալեքսանդրոպոլում։ Դաշտերը լցվեցին դիակներով։ Սկսվեց անասելի կողոպուտ։

Կապիտալի նախասկզբնական կուտակման այն վայրագ մեթոդները, որոնք կիրառվում էին կապիտալիզմի արշալույսին և որոնց օբեկտիվ լուսանկարը տրված է Մարքսի «Կապիտալ»-ում, իրենց սրաճմլիկությամբ նսեմանում են թալանի ու բռնության այն բիրտ մեթոդների հանդեպ, որ կիրառում էին Թյուրքական ասկյարն ու խուժանը իրենց փաշաների ղեկավարությամբ։ Շիրակի շատ գյուղեր ամայացան, ապականվեց հողը։ Ժողովուրդը անեծքի երգեր հյուսեց, որոնց մեջ շատ ուլեֆ կերպով նկարագրված էր իրականությունը։

«Երբ տաճիկը Արփաչայը անց կացավ,
Դերի բռնեց, մարդ չմնաց Շորագյալ,

. . . . . .

Մաքուր քոդով հարս չմնաց Շորագյալ և այլն։

Շատ երիտասարդներ գերվեցին և տաժանակիր աշխատանքի քշվեցին Թյուրքիայի խորքերը։ Պատմում են, թե ինչպես Ալեքսանդրոպոլից դեպի

կարս և ապա Էրզրում ուղարկվող գերիներին, որպես կանոն, իջեցնում էին բոլոր մեծ կայարաններում, ուր նրանց սպասում էին գոգերը քարերով լի թյուրք կանայք։ Մեկ-երկու ժամ գերիները պետք է անցնեին նշանակված վայրով, որտեղ նրանք քարակոծման էին ենթարկվում թյուրք կանանց կողմից։ Այդ ձևով գերիների մի զգալի մասը, դեռ նշանակված վայրը չհասած, սպանվում էին քարերով։

Ալեքսանդրոպոլի գավառի շատ գյուղեր այրվել էին բնակիչների մեծ մասի հետ միասին։

Ասկյարը Խուժանի հետ միասին աննկարագրելի թալան կատարեց։ Այլ լրիվ տվյալներով՝ միայն Ալեքսանդրոպոլի գավառից քշել ու սարել էին ավելի քան 250 հազար խաղաղ ու մանր եղջերավոր անասուններ։

Դաշնակների ներքին և արտաքին քաղաքականության բուն էությունը տալու համար դիմենք վիճակագրական տվյալներին։ Ըստ վիճակագրական տվյալների՝ 1919 թվականի սկզբներին Հայաստանի բնակչության նվազագույն քանակությունը կազմել է 1.035.202 հոգի։ Այդ նույն ժամանակվանից մինչև 1920 թվականի նոյեմբերի վերջերը, այսինքն երկրում սովետական կարգեր հաստատվելու մոմենտը, գաղթի և այլ ճանապարհներով մուտք են գործել 310.835 մարդ։ Չհաշվելով ծնունդը, որ կյանքի անտանելի պայմանների հետևանքով խիստ ընկել էր, և դուրս գալով նորմալ ելքը երկրից դուրս, Հայաստանում սովետական կարգեր հաստատվելու օրը բնակչության մինիմում քանակությունը պետք է կազմեր 1.205.730 մարդ։ Մինչդեռ հիշյալ ժամանակամիջոցում բնակչության ընդհանուր թիվը չի գերազանցել 720.000 մարդուց։ Այդ նշանակում է, որ ընդամենը մեկ և կես տարվա ընթացքում Հայաստանում սպանվել ու մեռել են 485.730 մարդ, այսինքն՝ ավելի քան նրա կազմի 1/3-ը։

Թվում է, թե ավելորդ են այլ տվյալները, ինչպես և մեկնաբանությունները սպառիչ գաղափար կազմելու համար դաշնակների ներքին և արտաքին քաղաքականության կորոտաբեր հետևանքների մասին հայ աշխատավորության համար։ Ահա թե ինչու Հայաստանում սովետական կարգեր հաստատվելու 20-ամյակին նվիրած իր առաջնորդող հոդվածում կենտրոնական Կոմիտեի սրգան «Զրավդա»-ն գրում էր. «Ծանր ու մռայլ էր Հայաստանի աշխատավորության ճակատագիրը ցարական իմպերիայի երկգլխանի արծվի պայմաններում։ Սակայն աշխատավորների ամենասև օրերը վրա հասան դաշնակների, բուրժուազիայի այդ անիծյալ լակեյների տիրապետության օրոք»։[1]

Հայաստանի աշխատավորությունը համոզված էր իր հաղթանակի մեջ։ Նա նույնիսկ այդ մռայլ ու ամենածանր օրերին հույսը չէր կորցնում։ Նա հավատով լի էր դեպի հաղթանակը և այն կապում էր ռուս մեծ ժողովրդի, բոլշևիկների պարտիայի, Լենինի ու Ստալինի անվան հետ։ Չկորցնելով հաղթանակի նկատմամբ հավատը, Հայաստանի բանվորներն ու գյուղացիները շարունակում էին պայքարը դաշնակների դեմ։ Այդ պայքարը ղեկավարում էին բոլշևիկները։ Դաշնակների բիրտ ռեժիմն ապրում էր իր հոգեվարքը։ Բանակը քայքայվում էր, զինվորը չէր ենթարկվում սպային, գասալությունը մասսայական բնույթ էր ընդունել, ինչպես կարող

[1] «Զրավդա», 24 նոյեմբերի 1940 թ.

էր գինվորը կռվել, երբ գյուղում թալանվում էր նրա ընտանիքը, երբ նրա անտեսությունը քայքայվում էր, իսկ ինքն էլ խմբապետների ու դաշնակ բարձրաստիճան սպաների ձեռքին մի իրավագուրկ էակ էր, հասցված մինչև անասունի աստիճանին։ Թյուրքիայի դեմ մղված անհավասար մարտը ավելի խորացրեց բանակի քայքայման պրոցեսը և որքան էլ ահաբեկիչ լինեին դաշնակների ռեպրեսիաները, միևնույն է, քայքայման պրոցեսը կանգնեցնել չէին կարող

Բանակն ապրում էր խորը շերտավորում։

Բոլշևիկներն ստեղծել էին ռևոլյուցիոն կորիզ բանակի ներսում։ Բանակին և ժողովրդին բոլշևիկների շուրջը համախմբելու գործում բացառիկ դեր էր խաղում 1920 թվականի ապրիլից Բաքվում լույս տեսնող «Կոմունիստ» թերթը։ Նրա հենց առաջին համարում հատուկ տեղ էր հատկացված Հայաստանում գոյություն ունեցող իրադրությանը։ «Կոմունիստ»-ի հետագա համարներում լույս էին տեսնում հակադաշնակցական հոդվածներ, որոնք մերկացնում էին դաշնակներին, նրանց կորստաբեր քաղաքականությունը հայ ժողովրդի համար։ Կոմունիստական Ինտերնացիոնալի Գործկոմի հրավերով սեպտեմբերի 1-ին բացվեց արևելյան ժողովուրդների համագումարը։ Համագումարի պատգամավորների թվումն էին 1.57 հոգի։ Համագումարի աշխատանքները տևեցին 7 օր։ Բաքվում ի պատիվ համագումարի երթ կազմակերպվեց։ Երթն ընթացավ հանուն արևելյան ժողովուրդներին կապիտալիզմի լծից ազատագրելու նշանաբանի տակ։ Երեք օր հետո, սեպտեմբերի 10-ին, Բաքվում բացվեց Հայաստանի կոմունիստական կազմակերպության կոնֆերենցիան։ Կոնֆերենցիան քննության առավ Հայաստանի ընդհատակյա ռևկոմի զեկուցումը։

Այս և մի շարք այլ ռեոլյուցիոն բնույթի հավաքներ, որոնց մասին տեղյակ էին Հայաստանի բոլշևիկյան ընդհատակում աշխատող կազմակերպությունները, էական նշանակություն ունեցան դաշնակների դեմ, հանուն սովետական կարգեր հաստատելու պայքարի գործում։

Հայ ժողովրդի պայքարը դաշնակների դեմ նոր թափ էր առանում նոյեմբերի սկզբներին։ Նոյեմբերի 4-ին Բաքու ժամանեց հայ ժողովրդի ազատարար Մեծ Ստալինը։ Նա խնդիր դրեց Անդրկովկասի բոլշևիկների առաջ անհապաղ փրկելու հայ ժողովրդին։ Ընկեր Ստալինի դալուստը Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմը դիմավորեց հատուկ կոչով հանուն ռեոլյուցիայի ալիքի բարձրացման Անդրկովկասում։ Կենտկոմի կոչը, որ հրապարակվեց «Կոմունիստ»-ի № 155-ում, կայծակի արագությամբ տարածվեց Անդրկովկասի շատ վայրերում, այդ թվում նաև Հայաստանում։

Ոգեշնչված Մեծ առաջնորդի գալստյամբ, Հայաստանի բոլշևիկները նոր թափ հաղորդեցին երկրում արդեն ծավալված ապստամբություններին։ Ապստամբությունն ընդգրկեց Հայաստանի մի շարք շրջաններ և առաջին հերթին Սովետական Ադրբեջանին կից շրջանները։ Նոյեմբերի 28-ին Շամշադինը և Իջևանն արդեն գտնվում էին ապստամբների ձեռքում։ Ամսի 29-ին, Իջևանը գրավելու հաջորդ օրը, կազմակերպվում է ռազմա-ռեոլյուցիոն կոմիտե։ Նույն օրը, ամսի 29-ին, Հայաստանի կոմունիստական (բոլ-

---

«Կոմունիստ», 13 սեպտեմբերի 1920 թ., № 110։

չևիկների) պարտիան հրապարակում է իր դեկլարացիան, որով Հայաստանը հայտարարում է Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկա։[1]

Դեկլարացիայում Հայաստանի աշխատավորության ազատագրության հարցը կապվում էր ռուս ժողովրդի եղբայրական օգնության հետ, Կարմիր Բանակի աջակցության հետ։

«Խորհրդային Ռուսաստանը մինչև այժմ զգալի աջակցություն չկարողացավ ցույց տալ, որովհետև զբաղված էր քաղաքացիական կռվի կարևոր ճակատներում։ Նրանք կլանում էին նրա բոլոր ուժերը։ Լեհաստանի հետ կնքված հաշտությունը և ցարական վերջին գեներալ Վրանգելի ունեցած պարտությունը, այժմ ազատում են Կարմիր Բանակը։ Խորհրդային Ռուսաստանը այժմ, ապստամբ ժողովրդի հրավերով, հնարավորություն ունի եղբայրական օգնություն ցույց տալու նրանց ու Հայաստանը Անտանտայի գործակալներից ու դաշնակցական կառավարությունից փրկելու»։[2]

Հավատով լի դեպի Սովետական Ռուսաստանը, Հայաստանի Ռևկոմը դիմեց Ռուսաստանի Ժողովրդական Կոմիսարների Սովետի Նախագահ Վ. Ի. Լենինին, օգնություն խնդրելով նրանից։ Դիմումի մեջ ողջունելով Լենինին և հայտնելով կոմունիստական պարտիայի հաջողությունները դաշնակների դեմ մղվող կռվում, դաշնակներին առաջին հարվածը հասցնելու, Իջևանը և Դիլիջանը գրավելու մասին, միաժամանակ հույս է հայտնվում, որ Արևելքի ճնշված ժողովուրդների ազատարար Կարմիր Բանակը ցույց կտա անհրաժեշտ օգնություն՝ Հայաստանն ամբողջապես դաշնակներից ազատագրելու համար։ Հայաստանի Ռևկոմի հույսերը լիակատար կերպով արդարացան։ Վլադիմիր Իլյիչը անմիջապես ողջույնի հեռագրով հետևյալ պատասխանն ուղարկեց Հայաստանի Ռևկոմին.

«Հանձին Ձեզ՝ ողջունում եմ իմպերիալիստական լծից ազատված աշխատավորական Սովետական Հայաստանին։ Չեմ կասկածում, որ Դուք գործ կդնեք ամեն ջանք՝ եղբայրական համերաշխություն հաստատելու Հայաստանի, Թյուրքիայի և Անդրկովկասի աշխատավորության միջև։

Ժողովրդական Կոմիսարների Սովետի Նախագահ՝
ԼԵՆԻՆ»։

Լենինն իր հեռագիրը հասցեագրեց Ռևկոմին Երևան, որովհետև հեռագրին նախորդել էր ընկերներ Կիրովի, Օրջոնիկիձեի և Միկոյանի ղեկավարությամբ Ադրբեջանն ազատագրած 11-րդ բանակի զորամասերի օգնությունը Հայաստանի Ռևկոմին։ Դեկտեմբերի 2-ին Կարմիր Բանակի զորամասերը ապստամբների հետ միասին արդեն մտել էին Երևան։

«Պրավդա»-յի 1920 թվականի դեկտեմբերի 4-ի համարում միաժամանակ լույս տեսան Լենինի հեռագիրը Հայաստանի Ռևկոմին և ընկեր Ստալինի հայտնի հոդվածը՝ Հայաստանում Սովետական իշխանություն հաստատվելու մասին։ Հոդվածում, որ վերնագրված էր «Կեցցե Սովետական Հայաստանը», ասված էր. «Տանջված ու բազմաչարչար, Անտանտայի ու դաշնակների ողորմածությամբ սովի, քայքայման ու գաղթի մատնված

[1] ՀՍՍՀ դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ 1, էջ 1—5, Էջմիածին, 1921 թ.
[2] Նույն տեղ, էջ 3.

Հայաստանը, բոլոր «դարեկամների» կողմից խաբված այդ Հայաստանն այժմ իր փրկությունը դտավ այն բանի մեջ, որ իրեն հայտարարեց սովետական երկիր։

Ոչ Անդլիայի՝ հայկական շահերի այդ «դարավոր պաշտպանի» կեղծ հավաստիացումները, ոչ Վիլսոնի տխրահռչակ 14 կետերը, ոչ էլ Ազգերի Լիգայի ժեծադդորդ խոստումները Հայաստանի կառավարման նրա «մանդատով» հանդերձ՝ չկարողացան (և չէին կարող) Հայաստանը փրկել կոտորածից ու ֆիզիկական բնաջնջումից։ Միայն Սովետական իշխանության գաղտփարը Հայաստանին բերեց խաղաղություն և ազգային վերածննդի հնարավորություն» (Ստալին)։

Ռուսաստանում և Ադրբեջանում լույս տեսնող թերթերն ամենուրեք նշում էին Հայաստանում սովետական կարգեր հաստատվելու մասին։ Հեղափոխության բոցաշունչ տրիբուն Ս. Մ. Կիրովը Վլադիկավկազի Սովետում արտասանած իր ճառը նույնպես նվիրեց այդ խնդրին։[1] Բաքվի Սովետը դեկտեմբերի 1-ին Հայաստանում սովետական կարգեր հաստատվելու առթիվ հանդիսավոր նիստ հրավիրեց, որտեղ ճառով հանդես եկավ Գ. Կ. Օրջոնիկիձեն։

Ընկեր Օրջոնիկիձեն բնութագրելով հայ ժողովրդի ժամանակակից անցյալը, նշեց նրա կյանքում նոր էջ բացվելու հանգամանքը։ Կանգ առնելով Հայաստանում գոյություն ունեցող բացառիկ ծանր դրության վրա, նա հույս հայտնեց օգնության ձեռք մեկնելու հայ աշխատավորությանը։

«Թող նրանք լավ իմանան, որ մեր ողջ եռանդը, մեր ամբողջ ուժերը կնվիրվեն նրանց օգնելուն։» Ընդամենը մեկ շաբաթ չանցած՝ ընկ. Օրջոնիկիձեն Հայաստանի ոսկոմին հայտնեց Բաքվից դեպի Հայաստան հացով լիքը գնացք ուղարկելու մասին։

Բաշնակները բազմիցս ձիգեր գործադրեցին Հայաստանում սովետական իշխանությունը տապալելու, սակայն նրանց փորձերն ապարդյուն անցան։ Նրանց չօգնեցին ոչ Ալեքսանդրոպոլի խայտառակ պայմանները և ոչ էլ փետրվարյան ավանտյուրան։ Նոյեմբերի 29-ին ստեղծված սովետական իշխանությունը հետզհետե սկսեց ծավալել իր գործունեությունը Հայաստանի այժմյան տերիտորիայի վրա և մինչև 1921 թվականի կեսերը պայմաններ նախապատրաստեց ժողովրդական տնտեսության խաղաղ շինարարության անցնելու համար։

1920 թվականի նոյեմբերի 29-ից մինչև 1921 թվականի առաջին կեսերը ընկած ժամանակամիջոցը նշանավորվեց Հայաստանում բուրժուական պետական ապարատի ջարդախմամբ, սովետական նոր պետական ապարատի ստեղծմամբ։

Այդ շրջանը հանդիսացավ բուրժուազիային և կալվածատերերին էքսպրոպրիացիայի ենթարկելու, տնտեսական իշխող բարձունքները Սովետական պետության կողմից գրավելու և սոցիալիստական արտադրության եղանակը նախապատրաստելու համար անհրաժեշտ նյութական նախադրյալների ստեղծման շրջան։

Բաշնակների պետական ապարատի ծախծախումը և սովետական՝ նոր

[1] *С. М. Киров*, Статьи и речи. стр. 334

[2] *Г. К. Орджоникидзе*—Избранные статьи и речи. стр. 91 93.

պետական ապարատի ստեղծումն ազգարարվեց Հայաստանի Ռևկոմի հենց նոյեմբերի 29-ի դեկլարացիայում։ Նրանից հետո հետզհետե լիկվիդացվում են հին պետական ապարատի մնացորդները և նրանց հետ կապված զանազան գիվանագիտական ներկայացուցչությունները։

Դեկտեմբերի 6-ին դեկրետ է հրապարտկվում դաշնակների կառավարության հետ կապված զանազան դիվանագիտական ներկայացուցիչների միսիաների վերացման մասին։ Հայաստանի Ռեկոմը, երկրում ռևոլուցիոն կարգ ու կանոն սահմանելու, ինչպես նաև վարչական բարձրագույն պետական մարմին ստեղծելու նպատակով, որի միջոցով էլ Ռևկոմը պիտի կառավարեր երկիրը, կազմակերպեց Ներքին Գործերի Ժողովրդական Կոմիսարիատ։ Նրան հանձնարարվեց սովետական իշխանությունների կազմակերպումը տեղերում։

1920 թվականի դեկտեմբերի 14-ի դեկրետով «Ներքին Գործերի Ժողովրդական՝ Կոմիսարիատը հանդիսանում էր ՀՍՍՌ-ի բարձրագույն վարչական մարմինը, որի միջոցով Ռևկոմը կառավարում է երկիրը»։[1] Ներքին Գործերի Ժողովրդական Կոմիսարիատի պարտականություններն էին՝ «ա) իշխանության կազմակերպումը տեղերում, բ) երկրի ամբողջ վարչական կազմի կենտրոնացումը, գ) բոլոր տեղական վարչական հաստատությունների վրա վարչական հսկողություն»։[2]

Պետք է նշել, որ Ներքին Գործերի Ժողովրդական Կոմիսարիատի, որպես երկրի բարձրագույն վարչական մարմնի ֆունկցիաներն ու պարտականությունները շարունակելու էին մնալ մինչև ՀՍՍՌ-ի կոնստիտուցիայի մշակումը։

Այս կոմիսարիատը իր կազմակերպման առաջին իսկ օրերից ձեռնամուխ եղավ բուրժուական ապարատի և նրա հետ կապված պաշտոնների լիկվիդացմանը։ Դեկտեմբերի 13-ին հրաման արձակվեց նահանգապետությունները, քաղաքային ինքնավարությունները, գավառական կոմիսարները, գաշնակների Ներքին Գործոց Նախարարության արտակարգ լիազորությունները, միլիցիայի տեսուչները և մի շարք այլ հիմնարկություններ ու պաշտոններ վերացնելու մասին։[3]

Ապա Ռևկոմի մի շարք դեկրետներով և ՆԴԺԿ-ի հրամաններով կարճ ժամանակամիջոցում լիովին լիկվիդացվում են պետական հին ապարատի բոլոր տեսակի հաստատությունները և փոխարենն ստեղծվում են պրոլետարիատի դիկտատուրայի օրգանները։

Մինչև սովետական կարգեր ստեղծվելը Հայաստանում գործում էին ռուսական ցարիզմի օրենքները՝ «Հավաք օրինացս»-ը։ Հայաստանի Ռևկոմը, աշխատավորությանը սովետական դեմոկրատիայի հիմունքներով կառավարելու, երկրի տնտեսական ու քաղաքական կյանքը նոր հիմունքներով կառուցելու նպատակով, դեկտեմբերի 21-ի իր դեկրետով չեղյալ համարեց «Հավաք օրինացս»-ը և ընդունեց Սովետական Ռուսաստանում գործող օրենքները։

Բուրժուական պետական ապարատը ջախջախելու, սովետական, նոր պետական ապարատը ստեղծելուն զուգընթաց, սովետական իշխանությունն

[1] ՀՍՍՀ Դեկրետների և հրամանների ժողովածու, գրք Ա, էջ 8.
[2] Նույն տեղ, էջ 8—9։
[3] Նույն տեղ էջ 11։

իր մի շարք դեկրետներով և հրամաններով իրականացրեց տնտեսական խոշոր բարձունքների գրավումը. բուրժուազիայի էքսպրոպրիացիան և հիմք դրեց արտադրության միջոցների հանրային սեփականությանը։ Այս ուղղությամբ առաջին քայլերը հանդիսացան մասնավոր բանկերի պետականացումը և միասնական պետական բանկի ստեղծումը։

Որպես գյուղացիական երկրում, Հայաստանում կենսական նշանակություն ուներ հողը՝ հարստության այդ մայրը։

Հողի համար դարերով մաքառած հայ գյուղացու ջանքերը միշտ էլ անցել էին ապարդյուն։ Սովետական իշխանությունն իր գոյության առաջին իսկ օրերից մի հպարվածով ոչնչացրեց հողի կալվածատիրական, բուրժուական սեփականությունը և դրա հետ կապված, աշխատավորությանը հողի միջոցով շահագործելու արժատները։

Դեկտեմբերի 28-ին Հայաստանի Ռեկոմը դեկրետ հրապարակեց հողերի պետականացման մասին։ Դեկրետն ազդարարում էր՝

«Բանվորա-գյուղացիական աղդաբնակության հողաղուրկ և ոակավահող մասը հողաբաժիններով ապահովելու և գյուղատնտեսությամբ զբաղվել ցանկացողներին հողերը բաշխելու նպատակով, այլև հանրապետության բոլոր կարիքները բավարարելու համար, արքունական, նաղելի, եկեղեցական, վանքային, վակուֆային, մեչետային, իրավաբանական անձերի և մասնավոր հողերը դառնում են Հայաստանի Սոցիալիստական Հանրապետության սեփականություն»։

Այս դեկրետը Հայաստանի աշխատավոր գյուղացու համար նոր ուղի էր բաց անում։ Նա լիկվիդացնում էր գյուղացիության մի դդալի մասի բացարձակ հողաղրկությունը և սակավահողությունը և պայմաններ էր ստեղծում աշխատավորական հիմունքներով հողն օգտագործելու, որը, ինչպես հայտնի է, նախապատրաստեց հողի կոլեկտիվ օգտագործման համար անհրաժեշտ նախադրյալներ։

Պատկերելու համար, թե ինչ էր շահում գյուղացին այդ պատմական ակտի իրականացմամբ՝ մատնանշենք հետևյալը։

Ցարիզմի օրոք երկրում եղած մոտ 600 հազար հեկտար վարելահողերի 25%-ը պատկանում էր խոշոր հողատերերին և վանքերին։ Նույնչափ էլ կենտրոնացած էր գյուղական կուլակների և համփաների ձեռքում։ Վարելահողերի միայն կեսն էր, որ գտնվում էր աշխատավոր գյուղացիների ձեռքում, որոնք գյուղական տնտեսությունների ավելի քան 95%-ն էին կազմում։ Մատնանշենք, որ ինչպես ցարիզմի, այնպես էլ դաշնակների օրոք աշխատավոր գյուղացիները մասնավոր հողատերերի և պետության հանդեպ ունեին ըստ էության ճորտական բնույթի մի շարք պարտավորություններ։

Երկրում եղած մոտ 140 հազար հեկտար խոտհարքներից 100 հազար հեկտարը կալվածատերերին ու պետությանն էր պատկանում։ Այգիների մոտ կեսից ավելին կալվածատիրական էին, իսկ մնացածի մեծ մասն էլ գյուղական կուլակներինն էր։ Հողի մասին սովետական իշխանության հրապարակած դեկրետով ընդհանուր առմամբ մոտ 1,5 միլիոն հեկտար հող վերցվում էր կալվածատերերից, նախկին պետական գանձարանից, վանքերից ու եկեղեցիներից և հատկացվում գյուղացիությանը։

1 Դեկրետների և հրամանների ժողովածու, էջ 31

Դրանով ոչնչացվեց բացարձակ ռենտան, որը տարբեր ձևերով հողատերերը վերցնում էին գյուղացիներից։

Ձիշտ է, Հայաստանի Ռևկոմը հողի պետականացման իր դեկրետում չէր նախատեսում միաժամանակ անտառների, ջրերի և ընդերքի պետականացում, ինչպես այդ կատարվեց Սովետական Ռուսաստանում, սակայն դրանց ազգայնացումը կատարվում է առանձին դեկրետներով, հողի ազգայնացումից շատ չանցած, և լրիվ չափով ավարտվում է մինչև 1921 թվականի հունվարի վերջերը։

Այնուհետև առանձին դեկրետով և հրամաններով ազգայնացման են ենթարկվում ժառանգավոր-կապիտալիստական արդյունաբերական ձեռնարկությունները, կապի և հաղորդակցության նշանակություն ունեցող ձեռնարկություններն ու հաստատությունները։

Այս բոլոր ռևոլուցիոն միջոցառումներով ստեղծվում են նյութական նախադրյալներ տնտեսությունը սոցիալիստական ու պլանաչափ ձևով կազմակերպելու համար։

Ազատվելով Սովետական Ռուսաստանի փորձից, հատուկ ապարատ ստեղծվեց տնտեսությունը նոր ձևով կազմակերպելու համար։ 1921 թվականի հունվարի 21-ին Հայաստանի Ռևկոմը դեկրետ հրապարակեց ժողովրդական Տնտեսության Խորհուրդ կազմակերպելու մասին։

Ժողովրդական Տնտեսության Խորհուրդ կազմակերպելու մասին դեկրետը իր բովանդակությամբ հիմնականում համընկնում էր 1918 թվականին Ռուսաստանում կազմակերպված ԺՏԳԽ մասին եղած կանոնադրության հետ։

Դեկրետի երկրորդ կետն ասում էր.

«Ժողովրդական տնտեսության խորհուրդը պետք է կանոնավորի ժողովրդական տնտեսությունն ու պետական ֆինանսները։ Այս նպատակով ժողովրդական տնտեսության խորհուրդը մշակում է երկրի տնտեսության կարգավորման ընդհանուր ծրագիրն ու նորմաները և համաձայնեցնում ու միացնում է կենտրոնական և տեղական տնտեսական հիմնարկությունների գործունեությունը»։

Ժողովրդական տնտեսության խորհուրդը, որը կից էր Հայաստանի Ռևկոմին, ուներ մեծ լիազորություններ և հանդես էր գալիս որպես երկրի տնտեսական կյանքը պլանաչափ կերպով կազմակերպող օրգան։ Նրա իրավասությանն էին հանձնվում այն բոլոր արտադրական ձեռնարկությունները, որոնք ազգայնացվում էին և դարձվում պետական։

Այսպիսով, 1920 թվականի երկրորդ կեսերից մինչև 1921 թվականի փետրվարն ընկած ժամանակաշրջանում Հայաստանում հաղթանակեց Հոկտեմբերյան Սոցիալիստական ռևոլուցիան։ Ստեղծվեցին սովետական կարգեր, ավարտվեց «կարմիր գվարդիական դրոհը կապիտալի վրա» (Լենին)։ Հիմք դրվեց պետական նոր՝ տնտեսությունը պլանավորող ապարատի հանձին ԺՏԽ-ի։ Այս ամենի և հետագայում էլ սովետական իշխանության կիրառած մի շարք միջոցառումների շնորհիվ պայմաններ ստեղծվեցին անցնելու պատերազմի և դաշնակների տիրապետության ժամանակ ստեղծված տնտեսական փլուզումը լիկվիդացնելու, տնտեսությունը վերականգնելու, որը և զուգորդվեց աշխատավորների կյանքի պայմանների բարելավման հետ։

Դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ I, էջ 84։